Ողջու՛յն, սիրելի՛ ընկեր,

Ես Գոհարն եմ՝ ապագա բժշկուհի, որն աշխարհն ուզում է տեսնել սիրով լեցուն:

Նամակը գրում եմ ու միաժամանակ պատկերացնում, որ տարիներ անց գուցե հանդիպենք միմյանց սուրճի սեղանի շուրջ, ժպիտով հիշենք, թե ինչպես ծանոթացանք և ինչպես դարձանք խաղաղության աղավնիներ:

Այս ամենը տեսնելու ու զգալու մեծ ցանկությամբ հիմա ամեն բան թողել եմ մի կողմ, վերցրել եմ թուղթն ու գրիչը, մոռացել մնացյալ խնդիրների ու առօրյա մտածմունքների մասին:

Անծանոթ ենք դեռ, բայց մի բան հաստատ է, որ երկուսս էլ ապրում ենք նույն աշխարհում: Երկուսիս համար էլ արևը մեկն է, երկինքը, լուսինը, աստղերը նույնն են: Երկուսս էլ բանական մարդիկ ենք, որոնք սիրտ ունեն, հոգի, սիրել գիտեն, ում աչքերն ու ականջները միայն խաղաղություն են ուզում տեսնել ու լսել:

Դեռ օրորոցում ես արդեն ազատության կռիվ էի տալիս, թևերս արձակել էի ուզում: Գիտեմ, բոլորս էլ ձգտում ենք ազատության, սակայն չպետք է մոռանանք խաղաղություն պահպանելու մասին:

Դարերով փոխանցվող թշնամանքը միլիոնավոր կյանքեր է խլել, ինչի պատճառով սերը պակասել է մեզ շրջապատող աշխարհում:

Հասունացել է այն պահը, երբ ինձ ու քեզ պես մարդիկ կգտնեն այն կորած երազը, որտեղ միայն խաղաղությունն է ապրել:

Գիտե՞ս, ես ինքս ունեմ թուրք և ադրբեջանցի ընկերներ և ուզում եմ՝ համոզված լինես, որ ինչպես նրանց, այնպես էլ քո ու քո ընկերների և հասակակիցների հանդեպ լցված չեմ թշնամանքով: Երազում եմ, որ մի օր ինչպես այլ ազգի մարդիկ, այնպես էլ դու հյուր գաս ինձ Հայաստանում որպես հարևան երկրի բնակիչ, այլ ոչ թե թշնամի, և հենց այստեղ ծանոթանաս մեր մշակույթին, ավանդույթներին և պատմությանը: Իմացի՛ր, որ այս ամենն անկեղծ է, այլ ոչ թե ուղղակի ասված խոսքեր:

Վստահի՛ր ինձ ու տու՛ր ձեռքդ, և թո՛ղ մենք լինենք այն սերունդը, որը կկարողանա ազատվել անցյալի կապանքներից և սիրով ու համերաշխությամբ լեցուն ապագա կառուցել:

Թո՛ղ մենք լինենք այն երիտասարդները, որոնք վերջնականապես կհաղթեն իրենց մեջ ապրող ատելությունը, որպեսզի խաղաղություն վերագտնելու ճանապարհին այլևս ոչ մի արգելքի չհանդիպեն:

Իսկ դու՞, դու ի՞նչ երազանքներ ունես, և ինչպիսի՞ն են քո պատկերացումները խաղաղության մասին:

Ուրախ եմ, որ նման հնարավորություն ընձեռվեց, և կարողացա իմ սրտինը փոխանցել քեզ: Հուսով եմ, որ քո նամակում ևս կգերակշռի անկեղծությունը: Շնորհակալ եմ նամակս ընթերցելու համար, ի՛մ բարեկամ:

Քո նամակին անհամբեր սպասող՝
Խուճուճ Գոհար